ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
Երևան - 1, Նալբանդյան փ. 104

«29» 11 2016թ. N: 11/827

Օր. 1

ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3,
4-րդ հարկ, <<Ինֆորմացիայի
ազատության կենտրոն>> ՀԿ
նախագահ Լ. Դոյդոյանին

ՀՀ ԱԱԾ տնօրենին հասցեագրված Ձեր 21.11.2016թ. N 310-ի 6 տեղեկատվություն ստանալու հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ ԱԱԾ տնօրենի 05.05.2016թ. N 17-Ա հրամանի համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել ՀՀ ԱԱԾ տնօրենի աշխատակազմի ղեկավար Միքայել Իվանի Խաչատուրյանը, որի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքում (http://www.sns.am/index.php/am/contacts):

Առդիր՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի 05.05.2016թ. N 17-Ա հրամանի քաղվածքը, 1 թերթից:

Վարչության պետ Ա. Ավետիսյան

ՔԱՂՎԱԾՔ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի հրամանից

ԵՐԵՎԱՆ

« 05 » մայիսի 2016թ. N 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1204-Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին>> N 1204-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 433-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրության 11-րդ կետի <<է>> ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել տնօրենի աշխատակազմի ղեկավարին:

Տնօրեն (ստորագրություն) Գ.Կուտոյան

Ճիշտ է՝

ՀՀ ԱԱԾ կադրերի վարչության պետ Ս.Մովսեսյան

«28» նոյեմբերի 2016թ.